ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ (1962—1982)

ՀՈՎԻԿ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Սովետական իշխանությունը իր գոյության առաջին իսկ օրերից ջերմ հոգատարություն է ցուցաբերել տարագիր հայության ճակատագրի նկատմամբ և հնարավորության սահմաններում իրականացրել նրա որոշ մասի հայրենադարձությունը։

Սփյուռքահայերի հայրենադարձության ամբողջական պատմությունը առայժմ բավարար չափով լուսաբանված չէ։ Մեր կարծիքով այն կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի։ Առաջին փուլն ընդգրկում է 1921—1936 թթ., երբ տարբեր երկրներից հայրենիք եկան մոտավոր տվյալներով 42.286 տարագիրներ[1]։ Երկրորդ փուլն ընդգրկում է 1946—1948/49 թթ.։ Այդ տարիներին տեղի ունեցավ սփյուռքահայերի ամենամեծ ու զանգվածային ներգաղթը, որը հայտնի է մեծ հայրենադարձություն անունով։ Կարճ ժամանակամիջոցում արտասահմանյան 12 երկրից Սովետական Հայաստան եկավ 20.646 ընտանիք (89.750 մարդ)[2]։ 1950-ական թվականներին անհատական հայրենադարձության միջոցով հայրենիք են ներգաղթել ավելի քան 4000 սփյուռքահայեր[3]։ Այսպիսով, սովետական իշխանության առաջին 40 տարում հայրենիք են ներգաղթել, մոտավոր տվյալներով, 136036 սփյուռքահայեր։

Հայրենադարձության երրորդ փուլը սկսվել է 1962 թ. և շարունակվում է առ այսօր։ Նկատի ունենալով, որ մեր պատմագիտական գրականության մեջ հայրենադարձության նախորդ երկու փուլերը շատ թե քիչ ուսումնասիրված են, փորձենք անդրադառնալ 1962—1982 թթ. հայրենադարձության պատմությանը, որն ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական մեծ կարևորություն ու այժմեականություն։

Հաշվի առնելով բազմաթիվ սփյուռքահայերի հայրենադարձվելու բուռն ցանկությունը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ 1958 թ. աշնանը ստեղծվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման կառավարական հանձնաժողով (այսուհետև այն կրճատ կանվանենք հայրենադարձության հանձնաժողով)[4]։ Այդ հանձնաժողովի խնդիրն էր քննարկել հայրենիք վերադառնալ ցանկացողներից ստացված դիմումները և անհատական կարգով որոշել նրանց թույլատրելու կամ մերժելու հարցը։ Հանձնաժողովի որոշումներն այնուհետև հաստատվում էին ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի կողմից, ապա դրվում գործողության մեջ։ Հայրենիք գալու թույլտվություն ստացածների ցուցակները և հարակից մյուս նյութերն ուղարկվում էին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրություն, որը համապատասխան երկրի մեր դեսպանության կամ հյուպատոսության

---

1 *Հ. Ու. Մելիքսեթյան, Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915—1940), Երևան, 1975, էջ 270։*

2 *Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 326, ց. 1, գ. 231, թ. 4, ֆ. 362, ց. 2, գ. 24, թ. 12—27։*

3 *Նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 257, թ. 1—3 և գ. 327, թ. 12—23։*

4 *Նույն տեղում, ց. 2, գ. 21, թ. 1—2։*

միջոցով իրականացնում էր նրանց հայրենադարձությունը։ Սակայն անհատական հայրենադարձության փորձը ցույց տվեց, որ այդ եղանակով բնավ հնարավոր չէ բավարարել ստացվող մեծաքանակ խնդրագրերը։ Սփյուռքահայ բազմաթիվ կազմակերպություններից և արտասահմանյան մի շարք երկրների սովետական դեսպանություններից ու միսիաներից շարունակում էին ստացվել միջնորդություններ՝ մեծ խմբերով հայրենադարձություն թույլատրելու մասին։ Սփյուռքահայերի զանգվածային նոր հայրենադարձություն կազմակերպելու հարցը բարձրացրին նաև Հայաստանում սովետական իշխանության հաստատման 40-ամյակի տոնակատարության առթիվ հայկական գրեթե բոլոր գաղթօջախներից հայրենիք ժամանած պատվիրակությունները։ Հաշվի առնելով այդ ցանկությունները և հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարները, Սովետական Հայաստանի կառավարությունը միութենական համապատասխան մարմինների առջև հարց հարուցեց 1960—1970-ական թվականներին արտասահմանյան երկրներից մի քանի տասնյակ հազար սփյուռքահայերի հայրենադարձություն կազմակերպելու մասին։ ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը, ընդառաջելով Սովետական Հայաստանի կառավարության և սփյուռքահայ աշխատավորների ցանկություններին, 1961 թ. օգոստոսի 12-ին որոշում ընդունեցին հայերի նոր զանգվածային հայրենադարձություն կատարելու մասին[5]։ Այդ որոշման ընդունումից անմիջապես հետո միութենական ու հանրապետական համապատասխան մարմինները նախապատրաստական լայն աշխատանք ծավալեցին հայրենադարձների առաջին խմբերին ընդունելու և տեղավորելու ուղղությամբ։ Հայրենադարձության հետ կապված գործնական ամբողջ աշխատանքը ղեկավարելու համար ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1961 թ. օգոստոսի 29-ի համատեղ որոշմամբ կազմակերպվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե (այսուհետև այն կրճատ կանվանենք հայրենադարձության կոմիտե)[6]։

Զանգվածային նոր հայրենադարձություն թույլատրելու մասին սովետական կառավարության որոշումը սփյուռքահայ աշխատավորների շրջանում առաջ բերեց մեծ խանդավառություն։ Նրանք զանգվածաբար դիմում էին իրենց բնակության երկրի սովետական դեսպանությանը՝ խնդրելով թույլատրել հայրենադարձվելու Սովետական Հայաստան։ Ինչպես 1962 թ. սկզբին իր զեկուցագրի մեջ հայտնում էր ԵԱՀ-ում (Եգիպտոս) ՍՍՀՄ դեսպան Վ. Երոֆեևը, հայրենադարձության գծով ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի ներկայացուցիչների ժամանումը կահիրե և հայրենիք մեկնելու համար հայերի ցուցակագրումը մեծ ոգևորություն էին առաջ բերել եգիպտահայերի շրջանում։ Մեծ թվով հայեր, խմբերով ու անհատորեն, այցելում էին սովետական դեսպանություն և հայտնում հայրենադարձվելու իրենց բուռն ցանկությունը։ Հայրենադարձվել ցանկացողների ցուցակագրումը սկսելուց ընդամենը 25 օր հետո ՍՍՀՄ դեսպանության հյուպատոսական բաժնում արձանագրվել էր 350 ընտանիք (մոտ 2000 մարդ)[7]։ Եգիպտոսում հայրենադարձության նախապատրաստմանն ակտիվորեն աջակցում էին հայոց թեմական խորհուրդը և ռամկավարական կուսակցության տեղական կազմակերպության ղեկավարությունը։ Մեծ էր նաև իրանահայերի խանդավառությունը։ Իրանում ՍՍՀՄ դեսպան Ն. Պեգովը հայտնում էր, որ հայրենադարձության վերսկսման մասին Երևանի ռադիոյի հաղորդումը լսելուց անմիջապես հետո սկսվեց տեղի հայերի մասսայական հոսքը դեպի սովետական դեսպանատուն։ Ընդամենը երկու օրվա ընթացքում ավելի քան 2000 մարդ արձանագրվեց հայրենիք մեկնելու համար[8]։ Այդ նույն ժամանակ Ստամբուլից ՍՍՀՄ գլխավոր հյուպատոսը հաղորդում էր, որ տեղի հայ համայնքի ներկայացուցիչը իրեն հայտնել է, որ մոտ 1000 հայեր, գլխավորապես երիտա-

5 Նույն տեղում, ց. 1, գ. 514, թ. 3—6։

6 Նույն տեղում, ֆ., 362, ց. 10, գ. 1, թ. 1։

7 Նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 326, թ. 1—14։

8 Նույն տեղում, գ. 322, թ. 5։

սարդներ, պատրաստ են անմիջապես մեկնելու Սովետական Հայաստան[9]։ Կիպրոսի հանրապետությունում ՍՍՀՄ դեսպան Պ. Երմոշինը նույնպես հայտնում էր, որ հայ համայնքի ներկայացուցիչները խնդրում են կիպրահայերին շտապ-փույթ փոխադրել հայրենիք։ Սովետական դեսպանության ունեցած տվյալներով, 3200 հոգուց բաղկացած կիպրահայ համայնքի 80%-ից ավելին ցանկանում էր հայրենիք ներգաղթել[10]։

Ներգաղթողներին հանրապետությունում տեղավորելու համար ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1961 թ. նոյեմբերի 5-ին որոշում ընդունեց արտասահմանից 1962—1965 թվականներին ժամանող հայերին ՀՍՍՀ բնակավայրերում տեղավորելու մասին[11]։ Այդ որոշմամբ Սովետական Հայաստան ներգաղթող սփյուռքահայերին բնակարաններով ապահովելու և նրանց համար կուլտուր-կենցաղային անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով ՀՍՍՀ ժողտնտխորհը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր սովխոզների գլխավոր վարչությունը, Կիրովականի քաղսովետի գործկոմը, Իջևանի և Հրազդանի շրջսովետների գործկոմները պարտավորեցվում էին 1962—1965 թթ. ընթացքում պատրաստել 280 հազ. քառ. մ բնակտարածություն, որից 1962 թ. համար՝ 15.000 քառ. մ[12]։

1962 թ. հոկտեմբերի 7-ին Բաթում հասավ հայրենադարձների առաջին խումբը Կիպրոսից՝ 80 ընտանիք (336 մարդ), իսկ հոկտեմբերի 25-ին՝ երկրորդ խումբը ՆԱՀ-ից՝ 80 ընտանիք (213 մարդ)։ Բաքվով Իրանից հայրենիք եկավ 14 ընտանիք (58 մարդ)։ Այսպիսով, 1962 թ. խմբակային վիզաներով հայրենիք եկավ 174 ընտանիք (607 մարդ)[13]։ Բացի այդ, աշխարհի 10 երկրներից անհատական կարգով հայրենիք եկավ ևս 46 ընտանիք (144 մարդ)։ Այսպիսով, ըստ հայրենադարձության կոմիտեի 1962 թ. տարեկան հաշվետվության տվյալների, սփյուռքից հայրենիք ներգաղթեց 220 ընտանիք (751 մարդ)[14]։ Սակայն 1962—1982 թթ. կատարված հայրենադարձության վերաբերյալ կոմիտեի կազմած ընդհանուր աղյուսակի մեջ 1962 թ. ներգաղթածների քանակը ցույց է տրված 217 ընտանիք (757 մարդ)։ Մեր կարծիքով վերջնականապես ճշտված և ստույգ պետք է համարել կոմիտեի տվյալները[15]։

1963 թ. մայիսի 6-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը քննարկեց նույն թվականին հայրենադարձների ընդունման, տեղավորման և աշխատանքով ապահովման հարցը։ Սահմանվեց ընդունելության ընդհանուր պլանը՝ 3500 մարդ։ Որոշվեց հայրենադարձներին տեղավորել Լենինականում՝ 750, Կիրովականում՝ 700, Հրազդանում՝ 700, Լուսավանում (Զարենցավան)՝ 500, Աբովյանում 300, Ալավերդում և Իջևանում՝ 200-ական, Ղափանում՝ 100, Ստեփանավանում՝ 50 մարդ[16]։ ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը միաժամանակ համապատասխան մինիստրություններին ու գերատեսչություններին հանձնարարեց հայրենիք ժամանողներին անմիջապես ապահովել ըստ մասնագիտության աշխատանքով և կազմակերպել երեխաների ու երիտասարդների ուսուցման, ինչպես նաև մեծահասակների անգրագիտության ու կիսագրագիտության վերացման գործը[17]։

---

9 Նույն տեղում, թ. 5—6։

10 Նույն տեղում։

11 Նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 1, թ. 1—2։

12 Նույն տեղում, թ. 3—5։

13 Նույն տեղում, գ. 21, թ. 29։

14 Նույն տեղում։

15 Տե՛ս ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ընթացիկ արխիվ, «Տեղեկություններ 1962—1982 թթ. կատարված հայրենադարձության մասին» գործը։

16 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 10, գ. 2, թ. 18—24։

17 Նույն տեղում։

1963 թ. սփյուռքահայ 16 դաղթօջախներից Սովետական Հայաստան եկավ 619 ընտանիք (2304 մարդ)[18]։ Դրանից 412 ընտանիք (1732 մարդ) եկավ Իրանից, 45 ընտանիք (152 մարդ)՝ Կիպրոսից, 24 ընտանիք (44 մարդ)՝ Հունաստանից և 90 ընտանիք (243 մարդ)՝ Եգիպտոսից, խմբակային կարգով։ Մնացածներն անհատական վիզաներով հայրենիք եկան Թուրքիայից, Լիբանանից, Ուրուգվայից, Իսրայելից, Եթովպիայից, Սիրիայից, Իտալիայից, Իրաքից, Արգենտինայից, Բրազիլիայից և այլ երկրներից[19]։

1963 թ. հոկտեմբերի 11-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդն անդրադարձավ արտասահմանից վերադարձող հայերի ընդունելության, տեղավորման ու աշխատանքով ապահովման հարցերին և նշեց, որ հայրենադարձության կոմիտեն ու տեղական սովետներն այդ ուղղությամբ որոշակի գործ են կատարել։ Հանրապետության քաղաքներում ու ավաններում, ուր նախատեսված էր տեղավորել հայրենադարձներին, նախօրոք պատրաստվել էին բնակարաններ, միջոցառումներ էին ձեռնարկվել աշխատունակներին համապատասխան աշխատանքով ապահովելու, դպրոցահասակ երեխաներին ու երիտասարդներին հանրակրթական դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում ընդգրկելու համար և այլն[20]։

1964 թ. տեղի ունենալիք հայրենադարձության նախապատրաստման հարցը քննարկվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի մարտի 6-ի նիստում։ Որոշվեց 1964 թ. Իրանից, ԵԱՀ-ից, Կիպրոսից և այլ երկրներից ընդունել 2500 մարդ ու նրանց տեղավորել Երևան, Լենինական, Կիրովական, Լուսավան, Իջևան քաղաքներում և այլ բնակավայրերում։ Այդ նպատակով հայրենադարձության կոմիտեին հատկացվում էր 34200 քառ. մ բնակտարածություն, որից Երևանում՝ 5000, Լենինականում՝ 8000, Կիրովականում՝ 2000, Լուսավանում՝ 2000, Հրազդանում՝ 2000, Սևանում՝ 200 և հանրապետության սովխոզային ավաններում՝ 15000 քառ. մ[21]։ Միաժամանակ հայրենադարձության կոմիտեին հանձնարարվեց համապատասխան կազմակերպությունների հետ որոշել այն ձեռնարկությունները, որոնցում պետք է աշխատանքի տեղավորվեին ժամանող հայրենադարձները։ Այդ նպատակով Ժողտնտխորհի թեթև արդյունաբերության վարչությանն առաջարկվեց մինչև մարտի 15-ը շահագործման հանձնել տրիկոտաժի ֆաբրիկա Հրազդանում, իսկ մինչև օգոստոսի 1-ը՝ կոշիկի կարման լրացուցիչ արտադրամասեր Լենինականում և Կիրովականում[22]։

Նախապատրաստական այս աշխատանքները կատարելուց հետո սկսվեց հայրենադարձների ընդունումը։ 1964 թ. խմբակային վիզաներով հայրենիք եկավ 251 ընտանիք (1005 շունչ), այդ թվում՝ 58 ընտանիք (139 շունչ)՝ ԵԱՀ-ից, 6 ընտանիք (10 շունչ)՝ Կիպրոսից և 187 ընտանիք (836 շունչ)՝ Սիրիայից։ 30 ընտանիք (83 շունչ) հայրենիք եկավ անհատական կարգով, աշխարհի 11 երկրից, այդ թվում՝ ԱՄՆ-ից, Արգենտինայից, Ուրուգվայից, Ֆրանսիայից և Չինաստանից[23]։

Հայրենադարձության կոմիտեի 1965 թ. հաշվետվությունից պարզվում է, որ այդ տարվա հոկտեմբեր-դեկտեմբերին խմբակային վիզաներով հայրենադարձվել է 503 ընտանիք (2576 մարդ), որից ԵԱՀ-ից՝ 40 ընտանիք (108 մարդ) և Սիրիայից՝ 463 ընտանիք (2468 մարդ)։ Անհատական վիզաներով 1965 թ. հայրենիք է եկել 35 ընտանիք (124 մարդ)։ Այսպիսով, 1965 թ. խմբակային և անհատական վիզաներով հայրենիք է եկել 538 ընտանիք (2700 շունչ)[24]։ Այդ ամենի համար հայրենադարձության կոմիտեն ծախսել է 532.

---

18 Նույն տեղում, գ. 23, թ. 37։

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում, գ. 2, թ. 28—35։

21 Նույն տեղում, գ. 3, թ. 2—3։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում, գ. 25, թ. 34։

24 Նույն տեղում, գ. 27, թ. 28—29։

622 ռ., որից 82.970 ռ. որպես միանվագ դրամական նպաստ, իսկ 96.970 ռ.՝ այլ կարգի օգնություն[25]։

Սովետական կառավարությունը մեծ ու բազմակողմանի օգնություն էր ցույց տալիս հայրենադարձներին։ Բացի յուրաքանչյուր հայրենադարձի հենց սկզբից տրվող դրամական միանվագ նպաստից, հայրենադարձության կոմիտեն և տեղական սովետներն ու հիմնարկ-ձեռնարկությունները հետագայում ևս շարունակում էին նյութապես օգնել սովետական նոր քաղաքացիներին։ Այսպես, օրինակ, 1963—1964 թթ. ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը հայրենադարձության կոմիտեին և Լենինականի, Կիրովականի, Հրազդանի, Ղափանի քաղսովետներին ու Իջևանի շրջսովետին լրացուցիչ հատկացրեց 56500 ռ.՝ կարիքավոր հայրենադարձներին օգնելու համար[26]։ Այդ կարգի օգնությունը շարունակվեց նաև հետագայում։ Հայրենադարձներին օգնելու ուղղությամբ մեծ գործ կատարվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1965 թ. հուլիսի 7-ի որոշմամբ, որի նպատակն էր լիովին ապահովել 1946—1962 թթ. հայրենիք եկած անձանց բնակարանային կարիքները[27]։

1966 թ. մարտի 18-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը, անդրադառնալով հայրենադարձների ընդունման և տեղավորման հարցերին, համապատասխան քաղսովետների ու շրջսովետների գործկոմներին և շինարարության մինիստրությանը հանձնարարեց մեկամսյա ժամկետում վերացնել բնակելի շենքերում եղած բոլոր թերությունները, բարեկարգել հայրենադարձներով բնակեցված թաղամասերն ու փողոցները, շահագործման հանձնել կուլտուր-կենցաղային օբյեկտները, բարելավել կապի գործը, հայրենադարձներին աշխատանքով ապահովելու հարցերը, անասուններ ձեռք բերելու համար վարկեր տրամադրել սովխոզներում տեղավորված հայրենադարձներին և այլն։ Խիստ կարիքավոր հայրենադարձներին նյութական օգնություն ցույց տալու և տնային օգտագործման իրերով ապահովելու համար Մինիստրների խորհրդի ռեզերվային ֆոնդից բաց թողնվեց 35 հազ. ռ[28]։ ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրությանը հանձնարարվեց մինչև 1966 թ. ապրիլի 1-ը գյուղական վայրերում ապրող հայրենադարձներին ապահովել տնամերձով, սերմերով և տնկանյութով։ Լուսավորության մինիստրությանն առաջարկվեց հայրենադարձների բոլոր երեխաներին դպրոցներում ընդգրկելու համար բացել լրացուցիչ դասարաններ և միջոցներ ձեռնարկել հասակավոր հայրենադարձների անգրագիտությունը վերացնելու ուղղությամբ։ Հայրենադարձները երկու տարով ազատվելու էին գիշերօթիկ դպրոցներում ընդգրկված երեխաների համար վարձ վճարելուց։ Առևտրի մինիստրությանը և Հայկոոպին հանձնարարվեց բարելավել մատակարարումը և առևտուրը հայրենադարձների բնակավայրերում։ Առողջապահության մինիստրությանն առաջարկվեց էլ ավելի մեծ ուշադրություն դարձնել հայրենադարձների բուժսպասարկմանը[29]։

1965 թ. ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի՝ սփյուռքահայերի նոր մասսայական հայրենադարձության մասին 1961 թ. օգոստոսի 12-ի որոշման ժամկետն ավարտվեց։ 1966 թ. օգոստոսի 9-ին այդ կապակցությամբ ընդունվեց նոր որոշում[30], համաձայն որի 1966—1970 թթ. հայրենիք վերադարձողների վրա տարածվելու էին այն բոլոր արտոնությունները, որոնք նախատեսված էին ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1961 թ. օգոստոսի 12-ի որոշմամբ։ Սահմանվեց, որ 1966—1970 թթ. ընթացքում պետք է տարեկան հայրենադարձնել 1000 մարդ[31]։ Չնայած դրան, միշտ էլ

25 Նույն տեղում, թ. 59։

26 Նույն տեղում, գ. 2, թ. 26—27, 41—42 և գ. 3, թ. 4—5։

27 Նույն տեղում, գ. 3, թ. 7—8։

28 Նույն տեղում, գ. 4, թ. 2—7։

29 Նույն տեղում։

30 Նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 514, թ. 1—2։

31 Նույն տեղում։

ավելի շատ հայրենադարձներ են եկել, բացառությամբ 1967 թ.։ Այսպես, 1966 թ. հայրենիք ներգաղթեց 223 ընտանիք (1423 մարդ), որից խմբակային վիզաներով Սիրիայից 191 ընտանիք (1311 մարդ) և ուրիշ երկրներից անհատական վիզաներով՝ 32 ընտանիք[32]։

1967 թ., կապված մի շարք հանգամանքների հետ (մասնավորապես արաբական երկրների դեմ Իսրայելի ագրեսիայի հետևանքով), սփյուռքահայերի խմբակային հայրենադարձություն տեղի չունեցավ, այլ միայն անհատական վիզաներով 8 երկրից հայրենիք եկավ 148 ընտանիք (733 մարդ). այդ թվում Իրանից՝ 128 ընտանիք (679 մարդ), Լիբանանից՝ 8 ընտանիք (27 մարդ), Իրաքից՝ 2 ընտանիք (8 մարդ), Թուրքիայից՝ 4 ընտանիք (10 մարդ), ԱՄՆ-ից՝ 2 ընտանիք (4 մարդ), Արգենտինայից՝ 1 ընտանիք (2 մարդ), Անգլիայից՝ 2 ընտանիք (2 մարդ), Ֆրանսիայից՝ 1 ընտանիք (1 մարդ)[33]։

1968 թ. հունվարին հայրենադարձության կոմիտեն ամփոփեց 1962—1967 թթ. կատարված ներգաղթի արդյունքները և արեց մի շարք ընդհանրացումներ ու եզրակացություններ։ Կոմիտեն միաժամանակ վերադաս մարմիններին մի շարք առաջարկներ ներկայացրեց՝ հայրենադարձների ընդունելությունն ու տեղավորումն առաջիկայում բարելավելու վերաբերյալ[34]։ Իր զեկուցագրում հայրենադարձության կոմիտեն հատուկ ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ գնալով նվազում էր ներգաղթողների քանակը և այն երկրների թիվը, որոնցից ներգաղթ էր կատարվում։ Դա բացատրվում էր նրանով, որ մի շարք երկրների կառավարություններ (Լիբանան, Իրաք, Թուրքիա, և այլն) հայերի հայրենադարձությանը սկսել էին վերաբերվել անբարյացակամորեն կամ էլ բնավ թույլ չէին տալիս այն[35]։

Հայրենադարձության նախորդ փուլերում ներգաղթածները տեղավորվում էին ամբողջ հանրապետությունում։ 1962 թ. սկսած նրանք հիմնականում տեղավորվում էին Լենինականում, Կիրովականում, Հրազդանում, Ջրաբերդում, Աբովյանում և Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Աշտարակի, Թալինի ու Արարատի շրջանների սովխոզներում։ Ժամանելով բնակության վայրը, հայրենադարձներն ապահովվում էին սահմանված չափով բնակտարածությամբ և 2—3 օրվա ընթացքում նաև աշխատանքով։ 1962—1967 թթ. եկած հայրենադարձներին տրվել էր 270.180 ռ. միանվագ նպաստ։ Բացի այդ, խիստ կարիքավորներին որպես անվերադարձ օգնություն տրվել էր 201.450 ռ.[36]։ Հայրենադարձները երկու տարով ազատվում էին եկամտահարկից և անգավակության հարկից։ Չնայած դա մեծ օժանդակություն էր, այնուամենայնիվ նրանց համար նոր արտոնություններ սահմանելու անհրաժեշտություն էր զգացվում։ Խոսքը վերաբերում է հատկապես բազմանդամ՝ 7—10 հոգուց բաղկացած այն ընտանիքներին, որոնցում աշխատում էր միայն ընտանիքի գլուխը։ Որպես կանոն, խիստ աղքատ էին մասնավորապես Իրանից և Սիրիայից ներգաղթած ընտանիքները։ Նրանց եկամտի չափը, հատկապես սկզբնական շրջանում, երբ պահանջվում էր ոմանց վերաորակավորում կամ նոր մասնագիտության ձեռք բերում, համեմատաբար մեծ չէր և, բնականաբար, ընտանիքի կարիքները չէր բավարարում։ Հատկապես այդ պատճառով երբեմն հայրենադարձները հրաժարվում էին իրենց երեխաներին ուղարկել մանկական հիմնարկներ կամ գիշերօթիկ դպրոցներ։ Որոշակի դժվարություններ էին առաջանում նաև կոմունալ ծախսերի վճարման գործում և այլն։ Այն ընտանիքների համար, որոնք տեղավորվում էին հանրապետության սովխոզներում, ծագում էին աշխատանքի և կյանքի անսովոր պայմաններ։ Այդտեղ կարևոր նշանակություն էր ձեռք բերում գյուղացիների համար օժանդակ տնտեսու-

32 Նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 29, թ. 22—23։

33 Նույն տեղում, գ. 31, թ. 12։

34 Նույն տեղում, գ. 5, թ. 4—23։

35 Նույն տեղում։

36 Նույն տեղում։

թյան ստեղծման խնդիրը։ Սակայն այդ կարևոր հարցը շատ տեղերում անբավարար կամ էլ դանդաղ էր լուծվում։ Բանն այն է, որ սովխոզներում, որպես կանոն, կառուցվում էին բազմահարկ տներ և դրանցում տեղավորված ընտանիքները զրկվում էին անասուններ և տնային թռչուններ պահելու հնարավորությունից։ Երբեմն անհատական օգտագործման համար նրանց հողամասեր էին տրվում տնից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, որը նույնպես որոշակի անհարմարություններ էր առաջ բերում։ Կոմիտեն առաջարկում էր արմատապես բարելավել այդ հարցը։

Ինչպես նշվեց, հայրենադարձները հիմնականում տեղավորվում էին Կիրովականում, Լենինականում, Հրազդանում, Չարենցավանում և Աբովյանում։ Դա պայմանավորված էր նրանով, որ այդ քաղաքները, լինելով արդյունաբերական խոշոր կենտրոններ, լայն հնարավորություններ ունեին հայրենադարձներին ապահովելու համապատասխան աշխատանքով։ Սակայն համեմատաբար շոգ երկրներից (Իրան, Սիրիա, Եգիպտոս, Կիպրոս և այլն) եկած հայրենադարձների համար, կլիմայական պայմանների տեսակետից, այդ քաղաքներն ունեին նաև որոշակի անհարմարություններ։ Հատկապես այդ պատճառաբանությամբ հայրենադարձության կոմիտեն շատ դիմումներ էր ստանում հայրենադարձներից՝ իրենց այլ, ավելի տաք կամ ցածրադիր շրջաններ փոխադրելու խնդրանքով։ 1962—1967 թթ. կոմիտեն հարկադրված է եղել կատարել 295 ընտանիքի (1170 մարդ) տեղափոխություն, որը, անկասկած, լրացուցիչ հոգսեր է պատճառել նրան[37]։ Նախապես նշանակված բնակավայրերից այլ տեղ փոխադրելու մտայնության առաջացման գործում որոշակի նշանակություն ուներ նաև այն հանգամանքը, որ հայրենադարձներից շատերը, եկած լինելով խոշոր քաղաքներից և արդեն վարժված լինելով մեծ կենտրոններին հատուկ կյանքին, ձգտում էին անպայման հաստատվել Երևանում։ Հասկանալի է, որ կոմիտեն չէր կարող բավարարել այդ կարգի բոլոր խնդրանքները, ինչը և առաջ էր բերում որոշակի դժգոհություններ։ Նման փաստերից խուսափելու նպատակով կոմիտեն առաջարկում էր առաջիկայում պայմաններ ստեղծել ավելի մեծ թվով հայրենադարձների էջմիածնում և Արարատյան դաշտի ուրիշ վայրերում, ինչպես նաև Աբովյանում տեղավորելու համար։

Կուսակցական, սովետական և հասարակական կազմակերպությունների կողմից շատ բան էր արվում հանրապետության նոր քաղաքացիներին հասարակական-քաղաքական ակտիվ գործունեության մեջ ներգրավելու ուղղությամբ։ Հայրենադարձներից ոմանք ընտրվել էին ՍՍՀՄ և ՀՍՍՀ Գերագույն սովետի, շատերը՝ տեղական սովետների դեպուտատներ, դարձել արտադրության առաջավորներ, գիտնականներ, մանկավարժներ, արվեստագետներ, մշակույթի տարբեր բնագավառների ճանաչված դեմքեր։

Ինչ խոսք, կապիտալիստական տարբեր երկրներից միանգամից սոցիալիստական հասարակարգ եկած նոր քաղաքացիների շրջանում պահանջվում էր ծավալել բազմակողմանի աշխատանք, ցույց տալ ամեն տեսակի հոգատարություն ու աջակցություն, որպեսզի նրանք կարողանային որքան հնարավոր է արագ հաղթահարել այն դժվարությունները, որոնք անխուսափելիորեն առաջանում են ընդհանրապես մի երկրից մեկ ուրիշը մշտական բնակության տեղափոխվելիս։ Նաև դրանով էր բացատրվում այն փաստը, որ միայն 1966—1967 թթ. ընթացքում հայրենադարձության կոմիտեն ներգաղթածներից ստացել էր մոտ 3 հազ. դիմում[38]։ Հայրենադարձության կոմիտեն, տեղական կուսակցական ու սովետական մարմինների հետ համատեղ, աշխատում էր օպերատիվ լուծել հայրենադարձների կենցաղային, կուլտմասսայական, թոշակավորման, երեխաներին մանկական ու դպրոցական հիմնարկներում տեղավորելու, հողամասեր հատկացնելու, նյութական օգնություն կազմակերպելու

---

37 Նույն տեղում, թ. 1—3։

38 Նույն տեղում։

և բազմապիսի այլ հարցեր։ Հայրենադարձների հետ կոմիտեի և կուսակցական ու սովետական տեղական մարմինների աշխատանքը չէր ավարտվում նրանց ընդունելով, բնակարան ու աշխատանք հատկացնելով։ Նրանց հետ իսկական աշխատանքը փաստորեն սկսվում էր այդ ամենից հետո։ Դրանից հետո էր, որ կոմիտեն և մյուս կազմակերպությունները հայրենադարձների շրջանում տանում էին քաղդաստիարակչական և կուլտմասսայական աշխատանքներ, կազմակերպում էին նրանց հավաքներ, ժողովներ, գրողների, կոմպոզիտորների, նկարիչների, գիտնականների ու արտադրության առաջավորների հետ հանդիպումներ և այլ միջոցառումներ։ Հայրենադարձների համար կազմակերպվում էին հասարակական-քաղաքական և գիտահանրամատչելի թեմաներով զեկուցումներ, զրույցներ, դասախոսություններ, էքսկուրսիաներ դեպի հանրապետության տեսարժան վայրերը, արդյունաբերական ձեռնարկությունները։ Օրինակ, կուսակցական և սովետական տեղական մարմինների հետ համատեղ կոմիտեն հանդիպման երեկոներ է կազմակերպել Կիրովականում, Թալինի և Վեդու շրջաններում, որոնց մասնակցել են նաև գիտնականներ, գրողներ, արվեստագետներ։ Այդ հավաքներում խրախուսվել են լավ աշխատանքով աչքի ընկած հայրենադարձները։ Վերը նշված շրջաններում և Կիրովական քաղաքում 1968—1969 թթ. նշվեց 235 հայրենադարձների հայրենանվեր աշխատանքը, որի համար նրանք արժանացան տեղական սովետների պատվոգրերի, ստացան դրամական պարգևներ, թանկարժեք նվերներ, առողջարաններ և Մոսկվա մեկնելու անվճար ուղեգրեր[39]։ 1968 թ. հոկտեմբերին Հայրենադարձության կոմիտեն հանրապետության նոր քաղաքացիներին եղբայրական Վրաստանի և Ադրբեջանի տնտեսության ու մշակույթի հետ մոտիկից ծանոթացնելու նպատակով կազմակերպեց Երևան-Բաքու-Սումգայիթ-Երևան և Երևան-Թբիլիսի-Ռուսթավի-Սուխումի-Երևան ուղերթերով «Բարեկամության» տուրիստական գնացքներ[40]։

Հարկ է նշել, որ քաղաքական, կուլտմասսայական և դաստիարակչական աշխատանքները տարվում էին կյանքի, առօրյա գործնական խնդիրների հետ սերտորեն կապված, հայրենադարձների կողմից բարձրացվող և լուծում պահանջող հարցերի հետ շաղկապված։ Օրինակ, 1967 թ. Զարենցավանում և Իջևանում հայրենադարձների հետ անցկացված զրույցներից հետո կոմիտեի ներկայացուցիչները, շրջսովետների գործկոմների ու կուսշրջկոմների ղեկավարների հետ միասին, կազմակերպեցին հայրենադարձների ընդունելություն։ Այնտեղ, լսելով նրանց հուզող հարցերը, ձեռնարկությունների ղեկավարների և կուսակցական կազմակերպությունների քարտուղարների միջոցով հենց տեղում լուծվում կամ ընթացք էին ստանում բնակարանի, աշխատանքի տեղավորման, աշխատավարձի կարգավորման, թոշակավորման և այլ հարցեր[41]։

Արտասահմանից հայրենիք եկած սփյուռքահայերի մեջ զգալի քանակ էին կազմում անգրագետներն ու կիսագրագետները։ Այսպես, 1962—1982 թթ. հայրենիք եկած 7-ից բարձր տարիք ունեցող 26. 853 հոգուց բարձրագույն և թերի բարձրագույն կրթություն ունեին 139, միջնակարգ՝ 738, ոչ լրիվ միջնակարգ՝ 2106, տարրական 5201 հոգի։ Սիրիայից 1965 թ. ներգաղթածների մեծ մասը[42] (հատկապես Ղամիշլիի շրջանից եկած), ինչպես նաև Թուրքիայից ժամանածների որոշ մասը նույնիսկ հայերեն խոսել չգիտեր։ Հայրենադարձության կոմիտեն և ժողովրդական կրթության մարմինները մեծահասակ հայրենադարձների անգրագիտությունն ու կիսագրագիտությունը վերացնելու հա-

---

39 Նույն տեղում, գ. 6, թ. 6—7։

40 Նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 121, թ. 40։

41 Նույն տեղում։

42 Տե՛ս ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման ընթացիկ արխիվ, «Տեղեկություններ 1962—1982 թթ. կատարված հայրենադարձության մասին» գործը։

մար տեղերում կազմակերպում էին հատուկ խմբակներ։ Հասկանալի է, որ դա նույնպես հսկայական ջանքեր ու միջոցներ պահանջող գործ էր։

Հայրենադարձների նյութական դրության և նրանց շրջանում տարվող աշխատանքների հետագա բարելավման վերաբերյալ կոմիտեի առաջարկների մեծ մասը մասամբ կամ ամբողջովին արժանացավ վերադաս մարմինների հավանությանը, և դրանց կենսագործումը դրական նշանակություն ունեցավ հայրենադարձության հետագա ընթացքի վրա[43]։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեն, օգտագործելով իր կուտակած փորձը, շարունակեց ավելի կազմակերպված ձևով իրականացնել սփյուռքահայերի ներգաղթը։ Սակայն 1970-ական թվականներին միջազգային դրության սրման և հայերի հայրենադարձության նկատմամբ մի շարք կառավարությունների բացասական վերաբերմունքի հետևանքով գործնականորեն անհնարին դարձավ սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության իրականացումը։ Միաժամանակ, հաշվի առնելով բազմաթիվ սփյուռքահայերի հայրենադարձվելու մեծ ձգտումը, դա թույլատրվեց ոչ մեծ խմբերով և անհատական կարգով[44]։ Քանի որ հոդվածի ծավալը հնարավորություն չի ընձեռում ավելի հանգամանորեն անդրադառնալու հետագա տարիների հայրենադարձության ընթացքին, նպատակահարմար ենք համարում մեջ բերել այն ամփոփող աղյուսակը[45]։

Բերված աղյուսակում ամփոփված են սփյուռքահայերի 1962—1982 թթ. հայրենադարձության վերաբերյալ տեղեկություններն ըստ տարիների, ցույց է տված ներգաղթած ընտանիքների և շնչերի քանակը, տղամարդկանց և կանանց քանակը, նրանց հասակը, կրթությունը և մասնագիտությունը։ Ինչպես երևում է աղյուսակից, 1962—1982 թթ. ընթացքում արտասահմանյան շուրջ 30 երկրից հայրենիք է ներգաղթել 6795 ընտանիք (31, 920 մարդ)։ Այդ ժամանակամիջոցում ամենամեծ քանակով հայրենադարձություն տեղի է ունեցել 1969 թ.՝ 896 ընտանիք (4516 մարդ), իսկ ամենափոքր քանակով 1981 թ.՝ 35 ընտանիք (140 մարդ)։ Ամենամեծ թվով հայրենադարձներ եկել են Իրանից՝ 5039 ընտանիք (24.283 մարդ) և Սիրիայից՝ 889 ընտանիք (4848 մարդ)։ Հայրենադարձների թիվը համեմատաբար մեծ է եղել նաև ԵԱՀ-ից՝ 275 ընտանիք (727 մարդ), Թուրքիայից՝ 125 ընտանիք (547 մարդ), Կիպրոսից՝ 134 ընտանիք (505 մարդ), Լիբանանից՝ 113 ընտանիք (378 մարդ), Իրաքից՝ 75 ընտանիք (291 մարդ)։ Մյուս երկրներից հայրենադարձվել են 1-ից մինչև 49 մարդ։ Նշված ժամանակաշրջանում, թեև փոքր քանակով, հայրենադարձություն է կատարվել ոչ միայն զարգացող երկրներից, այլև կապիտալիստական այնպիսի զարգացած երկրներից, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Անգլիան, ԳՖՀ-ն, Ֆրանսիան, Իտալիան, Ավստրիան, Շվեդիան, Կանադան և այլն։

Հայրենադարձները տեղավորվել են հանրապետության ավելի քան 20 քաղաքներում՝ 5933 ընտանիք (27092 մարդ) և վարչական 9 շրջանների (Արարատ, Արտաշատ, Աշտարակ, Հոկտեմբերյան, Էջմիածին, Նաիրի, Թալին, Ղափան, Հրազդան) 27 սովխոզներում՝ 862 ընտանիք (4828 մարդ)։ Երևանում տեղավորվել է 339 ընտանիք (807 մարդ), Լենինականում՝ 1278 ընտանիք (5935 մարդ), Կիրովականում՝ 1020 ընտանիք (4729 մարդ), Հրազդանում՝ 762 ընտանիք (3775 մարդ), Արովյանում՝ 780 ընտանիք (3720 մարդ), Ջարենցավանում՝ 594 ընտանիք (2828 մարդ), Էջմիածնում՝ 262 ընտանիք (1224 մարդ), Մասիսում՝ 212 ընտանիք (1004 մարդ) և այլն[46]։

---

43 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 10, գ. 33, թ. 15—16։

44 Նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 564, թ. 1—36։

45 Տե՛ս ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ընթացիկ արխիվ, «Տեղեկություններ 1962—1982 թթ. կատարված հայրենադարձության մասին» գործը։

46 Նույն տեղում։

Տեղեկություններ 1962 թ. մինչև 1982 թ. ներառյալ աբստինենցիայի երկրներից ժամանած հայրենադարձների մասին

Ժամանման տարեթիվը	ընտանիքների քանակը	շնչերի քանակը	Սեռը		Հասակը						Կրթությունը						Աշխատանքների մասնագիտությունը							
			արական	իգական	մինչև 7 տարեկան	8—16 տարեկան	17—30 տարեկան	31—45 տարեկան	46—60 տարեկան	61 և ավելի տարիք ունեցող	բարձրագույն և թերի բարձրագույն	միջնակարգ	թերի միջնակարգ	տարրական	միջնադարյան	անգրագետ	արդյունաբերություն և տրանսպորտ	շինարարություն	արհեստագործներ	առևտրի ոլորտ	գրագիտության կարիքներ	ժամանակավոր կենցաղային	մասնագիտ. կրթ.
1962	217	757	386	371	—	211	154	165	135	92	13	89	48	272	32	62	—	—	—	—	—	—	—	—
1963	619	2304	1220	1084	—	852	412	524	302	214	23	135	142	576	301	275	—	—	—	—	—	—	—	—
1964	281	1088	573	515	—	432	206	212	136	102	7	28	42	176	123	241	626	113	486	62	14	64	204	11
1965	538	2700	1414	1286	—	1199	583	482	236	200	2	35	59	392	193	820	349	41	171	20	—	204	26	—
1966	223	1423	733	690	364	371	256	185	127	120	4	12	8	144	27	405	156	5	118	11	4	126	17	3
1967	148	733	385	348	160	185	115	153	63	57	5	19	14	117	60	102	56	19	151	6	2	27	11	3
1968	482	2350	1217	1133	457	687	391	456	210	149	4	28	77	310	253	460	186	19	290	29	1	195	39	1
1969	896	4516	2369	2147	876	1160	947	795	433	305	7	36	128	621	421	994	462	155	360	35	15	280	50	1
1970	812	4019	2082	1937	801	1063	787	750	355	263	9	49	157	585	415	767	558	62	465	80	10	144	63	2
1971	595	2885	1512	1373	565	757	575	496	299	193	6	47	95	458	341	537	367	79	417	75	14	128	50	2
1972	567	2734	1479	1255	543	620	601	421	346	203	11	57	76	459	278	568	343	155	449	27	15	91	32	7
1973	264	1282	658	624	223	259	318	218	156	108	1	31	60	256	136	233	187	63	251	63	3	14	20	1
1974	241	1124	601	523	226	232	272	187	130	77	12	38	29	246	103	190	149	51	177	51	4	3	19	12
1975	195	907	502	405	235	187	184	132	94	75	6	23	22	165	91	182	138	59	111	47	4	16	12	6
1976	201	922	494	428	208	207	174	142	116	75	1	17	38	113	137	185	143	56	153	61	3	19	16	1
1977	214	904	500	404	170	206	180	172	85	91	5	26	47	106	214	72	139	48	148	55	1	13	17	3
1978	92	390	212	178	61	99	66	65	62	37	2	7	18	72	81	28	46	23	63	10	2	18	7	1
1979	62	241	128	113	46	69	48	40	29	9	6	14	13	30	32	25	39	8	29	10	—	7	4	5
1980	43	206	103	103	60	34	42	20	28	22	2	11	4	17	22	51	28	15	7	2	1	—	—	1
1981	35	140	79	61	21	31	32	30	14	12	6	14	9	42	22	1	22	8	27	6	—	—	2	6
1982	70	295	160	135	51	66	60	59	35	24	7	22	20	44	61	10	45	18	57	1	2	2	5	7
ընդամենը	6795	31920	16807	15113	5067	8927	6403	5704	3391	2428	139	738	2106	5201	3346	6208	4087	997	3930	651	95	1349	592	73

Հայրենադարձների ընակեցումը կատարվել է հաշվի առնելով նրանց մասնագիտական կազմը, հանրապետության ներքին հնարավորություններն ու զարգացման հեռանկարները, ինչպես նաև մի շարք այլ գործոններ։ Հանրապետության հետագա զարգացման հեռանկարներից ելնելով, նպատակահարմար կլինի ներգաղթողներին այսուհետև տեղաբաշխել հիմնականում նոր աճող քաղաքներում, քաղաքատիպ ավաններում, Իջևան-Հրազդան երկաթուղու շրջանում, ինչպես նաև նոր յուրացվող հողերի վրա կազմակերպվող սովխոզներում։

Այսպիսով, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը, արմատապես շահագրգռված լինելով տարագիր հայության ճակատագրով, անցած ժամանակամիջոցում (1921—1982 թթ.) իրականացրել են բազմահազար սփյուռքահայերի հայրենադարձությունը, նրանց փրկելով օտարության մեջ ապազգայնացման անխուսափելի վտանգից։ Դա լենինյան ազգային իմաստուն քաղաքականության կենսագործման վառ օրինակ է։

РЕПАТРИАЦИЯ ЗАРУБЕЖНЫХ АРМЯН (1962—1982)

ОВИК МЕЛИКСЕТЯН

Резюме

Благодаря Советской власти многие армяне диаспоры получили возможность возвращения на родину — в Советскую Армению. Советское правительство с самого начала проявило большую заботу о судьбе зарубежных армян и создало условия для репатриации их значительной части. В 1921—1961 гг. из различных стран мира на родину вернулись 136036 армян, а в течение 1962—1982 гг. Советская Армения приняла 31920 человек — 6795 армянских семей из тридцати стран. В целом за годы Советской власти в Армению репатриировалось несколько тысяч зарубежных армян.

Репатриация такой значительной части армян диаспоры является знаменательной вехой в истории армянского народа, ярким и конкретным свидетельством животворности ленинской национальной политики КПСС.